Մուրացկանի նայուածքով ուրիշի նայուածքն են որոնում։

Ցորդը ու իր ժան մեքենան առաքելի նման անցնում են մեր դաշտերից։ Արարատը ծռում է իր գլուխը։ Բոսոտ մի հրեայ կոմունիստ մեզ լեղուաբանական դասեր է տալիս։ Ռուսաստանից եկած թուղթի մի կտոր պատգամի հանդամանք է առնում։

Մեր դրութիւնը, առարկայական պայմանները, պատմութիւնը, բացատրում են բանիմաց մարդիկ։

Տօսկանայի հեռաւոր եւ յետամնաց մի գիւղում խաչացի չինականները շուրջս էին բոլորուել։ Armeno?— Հա՞յ էք, poverini!

Խեղճե՜ր...

Ու մենք խեղճ ենք։ Ոչ որովհետեւ անասելի ֆիզիքական տառապանքներ ենք կրած, եղների նման մորթուած ենք, այլ որովհետեւ դարերից ի վեր կորցրել ենք այն, ինչ որ արտայայտելու համար բառ իսկ չունենք եւ որ անուանած ենք անորոշաբար ոգի։

Գաղափարների արտայայտական ձեւերից դուրս, աւանդութիւնների կաղապարուած բովանդակութիւնից դուրս, այնտեղ խորը ծածկուած չերտերի տակ, անտեսանելի գետակներ են անցնում եւ մարդու ու ժողովրդների իսկական էութիւնը ղեկավարում։

Պատահում է յաճախ, որ հողի տակ խուժող նոր լաւաները բռնկում են, այրւում, շոգիանում ու դարերի ընթացքին, յաջորդաբար դուրս նետւում հրաբխային լեռներից։ Գետնի տակ գոյացած հսկայ պարապը լեցւում է հեռուներից եկած ջուրերով։ Խորհրդաւոր հոսանքներ են կազմում, հողը ճեղքում, ճանապարհ բաց անում ու լճանում։ Իսկ երկրի մակերեսի վրայ, մարդիկ, մարած հրաբուխների սարոտին, արօր են քշում, ցանքս անում, գիւղեր եւ քաղաքներ շինում եւ անհոգօրէն ապրում իրենց ամենօրեայ կեանքը։

Մի օր էլ, կենդանիները, որոնք ընազդով կապուած են, կեանքի ամբողջի հետ, սարսափած մայում են, ոռնում, մլաւում, ու երկիրը շարժւում է, նոր հոսանքների ցնցումներին ենթարկւում, ճեղքւում, փլում։

Ողբերգութիւնը ներկայացնում է իր դրծողութիւններից մէկը։ Ու մարդիկ, կուրացած կենդանիների նման, յուսահատ եւ խելագար փախչում են, անիծելով անորոշը։

Եւ, սակայն, եթէ տունը փլում է մեր գլխի վրայ, այդ նրանիցն է, որ մենք, մեր բնազդական կապը ստորերկրեայ գործունէութեան հետ կորցրել ենք։ Այդ տեսակէտից կենդանիները մեզանից աւելի բախտաւոր են։

Եթէ այդ պատկերը մենք յարմարցնենք մարդկային էութեան, կը տեսնենք, որ լաւան ոգին է, ներքին ստեղծագործ այն ուժը, որը եթէ չգիտակցինք, անխուսափելիօրէն կը կերպարանափոխուի եւ կը դառնայ քանդիչ ուժ։

Մենք խեղճ ենք, որովհետեւ մեր ներքին բովանդակութիւնը մեր կամքից եւ մեր գիտակցութիւնից դուրս է մնացել։ Նա այլափոխուել է եւ դարձել է տարերային ուժ։

Շեղուել ենք մեր ճանապարհից։ Ապրել կեանքի մակերեսի վրայ։ Ընտրել դիւրին միջոցներ։ Ընդօրինակել ուրիշների փորձառութիւնից առաջ եկած գործիքները, յարմարուել, տաշուել, գործիք դարձել օտարականների ձեռքին, որբացել։

Ոգին ստեղծագործական ուժ է դառնում, երբ նա վեր է ածւում կենդանի մարմնի։ Ժողովուրդները ողջ են, երբ հետապնդում են իրենց ներքին, խոր օրէնքը։ Կեանքը, իսկական կեանքը, գաղափարների քանակութիւն չէ, այլ հոգեկան որակ, կեցուածք, կենսական որոշ արտայայտական ձեւ, պատասխանատուութեան զգացում եւ ստեղծագործական կարողութիւն։

Սարդարապատը դէմքը դարձրել է երկրին, ականջ է դնում լաւաների ձայնին։ Ու մեր, իսկական բարոյական դէմքը այստեղ է, **այս լերկ ու մերկ անապատի մէջ, այս ներուժ** լուութեան աշխարհի մօտ։

Հայաստանը, ամբողջ Հայաստանը, դեռ Որբերի գիւղ է։

Մենք նմանում ենք երեք նոյն ասպետներին, որոնք մահն են փնտռում եւ չեն կարողանում գտնել, որովհետեւ կեանքը ընթանում է իրենց հետ եւ իր ձայներով լեցնում անապատը, անդունդը եւ պարապը։

Եւ սակայն, կեանքը ուզում է ապրել։ Նա չի սպասում որբանոցի զանգին, որպէսզի ոտքերը քարշ տայ դէպի սեղանատուն։ Նա այ-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան